ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Գայանե Թովմասյան
Ռուբիկ Թովմասյան

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, զբոսաշրջիկ, հյուրընկալություն, տրանսպորտ, հյուրանոց, պանդոկ, ռեստորան, մարքեթինգ, դեստինացիա:*

Շատ հաճախ հյուրընկալությունն ու զբոսաշրջությունը նույնացվում են: Իրականում դրանք տարբերվում են իրարից, սակայն գտնվում են սերտ կապի մեջ: Հյուրընկալության կառավարումը կենտրոնանում է հյուրընկալության գործառնությունների բոլոր բաղադրիչների վրա՝ ներառյալ հյուրանոցները, սննդի օբյեկտները, տրանսպորտը, զվարճանքի վայրերը և այլն, իսկ զբոսաշրջության կառավարումը կենտրոնանում է զբոսաշրջության զարգացման, զբոսաշրջային մարքեթինգի, զբոսաշրջային արդյունաբերության կառավարման վրա: Զբոսաշրջությունը մարդկանց տեղաշարժն է իրենց մշտական բնակության վայրից դեպի այլ վայր, իսկ հյուրընկալությունը մարդկանց հանգստի ու հարմարավետության ապահովումն է այդ վայրերում: Հյուրընկալության արդյունաբերությունը մատուցում է գիշերակացի, սննդի, տրանսպորտի, հանգստի և ժամանցի ծառայություններ զբոսաշրջիկներին, ովքեր ճանապարհորդում են և ցանկանում են ստանալ այդ ծառայությունները, այսինքն՝ հյուրընկալության արդյունաբերությունը մատուցում է ծառայություններ զբոսաշրջությանը:

Ստորև կդիտարկենք զբոսաշրջության և հյուրընկալության պատմական զարգացման փուլերն ու առանձնահատկությունները:

Մարդկային հասարակության զարգացման ժամանակաշրջանից ի վեր մարդիկ սկսել են ճանապարհորդել տարբեր նպատակներով՝ ռեսուրսների հայթայթման, առևտրի, նոր վայրեր այցելելու, սովորելու և այլն: Իսկ ներկա զբոսաշրջությունը, որպես այդպիսին, կարելի է համարել նոր երևույթ, քանի որ այն զանգվածային բնույթ կրեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Գիտական հետաքրքրությունը զբոսաշրջության նկատմամբ առաջացավ XIX դ. կեսերին՝ պայմանավորված ճանապարհորդությունների պատմության վերաբերյալ գիտելիքների կուտակման, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության ձևավորման, մարդկանց կենսաձևի փոփոխության հետ: XX դարի կեսերին զբոսաշրջության պատմությունը զարգացավ որպես գիտություն, որի գլխավոր տարրերն էին սոցիալ-տնտեսական աշխարհագրությունը, արտադրության կազմակերպումը և այլն[1]:

Զբոսաշրջության պատմական զարգացումը կարելի է ներկայացնել չորս փուլով[2]՝

1. մինչև XIX դ. սկիզբը՝ զբոսաշրջության նախապատմությունը,
2. XIX դ. սկզբից մինչև XX դ. սկիզբ՝ էլիտար զբոսաշրջություն, զբոսաշրջային ծառայությունների արտադրությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունների առաջացում,
3. XX դ. սկզբներից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը՝ զանգվածային սոցիալական զբոսաշրջության առաջացումը,
4. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մինչ օրս՝ զանգվածային սոցիալական զբոսաշրջության, զբոսաշրջային արդյունաբերության ձևավորումը որպես զբոսաշրջիկների համար ապրանքների և ծառայությունների արտադրությամբ զբաղված միջճյուղային համալիր:

Այս բաժանման հիմքում ընկած է տեխնիկատնտեսական, սոցիալական նախադրյալները, զբոսաշրջության նպատակային գործառույթները:

** Հոդվածը ներկայացվել է 20.04.2020 թ., գրախոսվել՝ 05.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս История туризма: учебник,; отв. ред. и сост. Ю. Путрик, М., Федеральное агентство по туризму, 2014, с. 9-11.

[2] Տե՛ս Бабкин А., Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, 2008, с. 5.

Առաջին փուլը համարվում է զբոսաշրջության նախապատմության փուլ: Մասնավորապես Ք.ա. 4850-715 թ թ. եգիպտացիները ուղևորվում են կառավարության կենտրոնացված վայրեր, Ք.ա. 1760-1027 թ թ. Շան դինաստիան առևտրային ուղիներ է հաստատում հեռավոր Արևելքի հեռավոր վայրերում, Ք.ա. 1100-800 թ թ. փյունիկեցիները զարգացնում են մեծ նավատորմեր՝ իրենց կայսրության տարածքում առևտուր իրականացնելու և ճանապարհորդելու համար, Ք.ա. 900-200 թ թ. հույները զարգացնում են լեզուն և արժույթը, իսկ ճանապարհորդական ծառայություններն առաջանում են, երբ քաղաքները դառնում են դեստինացիաներ, Ք.ա. 500 թվականից մինչև Ք.ծ. 300 թ. հռոմեացիները բարելավում են ճանապարհները, իրավական համակարգը և պանդոկները՝ առևտրային, արկածային և ժամանցային հետագա ուղևորությունների համար, 300-900 թ թ. մայաները ստեղծում են առևտրի և ճանապարհորդական ուղիներ Կենտրոնական և Հյուսիսային Ամերիկայում, 1275-1295 թ թ. Մարկո Պոլոյի ճանապարհորդությունները հեռավոր Արևելքում սկսում են մեծացնել հետաքրքրությունը ճանապարհորդության և առևտրի նկատմամբ: XIV-XVI դդ. առևտրային ուղիները զարգանում են, երբ առևտրային գործունեությունն աճում է, և առևտրականները նոր տարածքներ են մտնում[1]:

Հին ժամանակներում ճանապարհորդության հիմնական նպատակներն էին՝ առևտուրը, ուսումը, ուխտագնացությունը և բուժումը: Օլիմպիական խաղերի զարգացումը Ք.ա. 776 թվականից հետո զբոսաշրջության էական խթան հանդիսանացավ՝ հիմնված սպորտային իրադարձության վրա: Հույները ճանապարհորդում էին օլիմպիական խաղերի վայրեր և գիշերում վրանային ճամբարներում՝ ստեղծելով մարզական զբոսաշրջային միջոցառում:

Միջին դարերում ուժգնացան նաև կրոնական բնույթի ճամփորդությունները: Մուսուլման ուխտավորները գնում էին Մեքքա, քրիստոնեաները՝ Երուսաղեմ և Եվրոպական քրիստոնյա երկրներ[2]:

Վերածննդի դարաշրջանում մեծացավ ճանապարհորդությունների անհատական բնույթը և կրթական ուղղվածությունը:

1613-1785 թ թ. համարվում է մեծ շրջագայության (Grand Tour) դարաշրջան, որը սկիզբ է առել հարուստ անգլիացիներից և տարածվելով՝ դարձել նորաձև այն անհատների համար, ովքեր ժամանակ և փող ունեին: Այս շքեղ ճանապարհորդությունները արտացոլում էին նրանց դիրքը սոցիալական և կրթական փորձառություններում: Grand Tour-ի մասնակիցները ճանապարհորդում էին Եվրոպայի տարածքում՝ փորձելով զգալ «քաղաքակիրթ աշխարհի» մշակույթները և գիտելիքներ ձեռք բերել իրենց այցելած երկրների արվեստի և գիտությունների մասին: Հիմնական այցելության երկրներն էին Ֆրանսիան, Շվեյցարիան, Իտալիան և Գերմանիան[3]: Եվրոպական մեծ շրջագայությունը հիմնականում հարուստ, ազնվական, արտոնյալ դասի կողմից էր իրականացվում՝ մշակութային, կրթական և ժամանցի նպատակով[4]: Այսպիսով, մինչ XIX դ. սկիզբը ճանապարհորդությունների հիմնական նպատակն էր՝ առևտուրը, ուխտագնացությունը, աշխարհայացքի ընդլայնումը, իսկ տեղաշարժման միջոցները պրիմիտիվ էին[5]:

Երկրորդ փուլն անվանում են երկաթուղային ճանապարհների շրջան: Ճանապարհորդությունների հանդեպ մեծ պահանջարկը ազդեց երկրների տնտեսությունների վրա: Շոգենավերի (1807 թ. ամերիկացի Ռոբերտ Ֆուլտոնի կողմից) և շոգեքարշերի (1814 թ. անգլիացի Ջորջ Ստոֆենսոնի կողմից) առաջացմամբ պայմանավորված՝ մեծացավ ճանապարհորդությունների թիվը և տեղափոխման արագությունը՝ ձևավորելով զբոսաշրջային շուկան: Առաջացան զբոսաշրջային կենտրոններ, զբոսաշրջային կազմակերպված տուրեր վաճառող գործակալներ և տուրոպերատորներ[6]:

---

[1] *Տե՛ս Roy A. Cook, Cathy H. C. Hsu, Lorraine L. Taylor, Tourism: the business of hospitality and travel, Boston: Pearson, 2018, p. 9.*

[2] *Տե՛ս Stephen J. Page, Tourism management, Routledge, Abingdon, 2019, p. 49-50.*

[3] *Տե՛ս Roy A. Cook, Cathy H. C. Hsu, Lorraine L. Taylor, նշվ. աշխ., էջ 11:*

[4] *Stephen J. Page, նշվ. աշխ., էջ 52:*

[5] *Տե՛ս Организация туризма: учеб. пособие, А. Дурович, Н. Кабушкин, Т. Сергеева и др., Минск, 2003, с. 8-9.*

[6] *Տե՛ս Кузик С., География туризма, https://uchebnikionline.com/turizm/geografiya_turizmu_-_kuzik_sp/istoriya_rozvitku_turizmu.htm, (մուտք՝ 01.12.2019).*

Առաջին զբոսաշրջային զանգվածային ճանապարհորդությունը եղել է Անգլիայում, երբ 1841 թ. ձեռնարկատեր Թոմաս Կուկը կազմակերպեց 600 մարդու տեղափոխություն երկաթուղային տրանսպորտով՝ շրջագայության նպատակով: 1845 թ. նա արդեն ճանապարհորդություն կազմակերպեց դեպի Լիվերպուլ՝ այնտեղ էքսկուրսիա անցկացնելու համար: 1847 թ. Կուկը բացեց զբոսաշրջային ընկերություն, որը սկսեց տոմսեր (ուղեգրեր) վաճառել ոչ միայն Անգլիայում, այլ նաև դրա սահմաններից դուրս: 1863 թ. Կուկը կազմակերպեց մեծ ուղևորություն անգլիացիների համար դեպի Շվեյցարիա, իսկ 1868 թ.՝ դեպի Հյուսիսային Ամերիկա: 1882 թ. նա կազմակերպեց առաջին շուրջերկրյա զբոսաշրջային ուղևորությունը: Կուկն առաջինը ստեղծեց զբոսաշրջային հատուկ ապրանքը՝ տուրը, ներառյալ պայմանագրերը երկաթուղային և շոգենավային ընկերությունների, հյուրանոցների և ռեստորանների հետ: Նա սկսեց պարբերաբար ուսումնասիրել զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը՝ դնելով զբոսաշրջային մարքեթինգի հիմքերը:

Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Չեխոսլովակիայում միջազգային կուրորտների զարգացմամբ այդ երկրներն Անգլիայի հետ միասին դարձան Եվրոպայի զբոսաշրջային կենտրոններ:

1875 թ. Շվեյցարիայի Լոզան քաղաքում ստեղծվեց առաջին ալպինիստական ակումբը, որտեղ պատրաստում էին լեռնային գնացքների վարպետներ, փրկարարներ: Ակումբի անդամների միջոցներով կառուցվեցին տնակներ և կացարաններ լեռների գագաթներ գնացող ճանապարհների վրա[1]:

Երրորդ փուլը կապվում է առաջին համաշխարհային պատերազմի, 1930-ական թթ. տնտեսական ճգնաժամի և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների հետ, որոնք բացասական ազդեցություն ունեցան զբոսաշրջության զարգացման վրա: Հենց այս պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում առաջացան զանգվածային զբոսաշրջության ծիլերը, որոնց ծաղկումը տեղի ունեցավ հետպատերազմյան տասնամյակում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (*չորրորդ փուլ*) զբոսաշրջությունն իրոք ունեցավ զանգվածային սոցիալական բնույթ: Սկսեց ձևավորվել հանգստի արդյունաբերությունն իր ինստիտուտներով, արտադրանքով, արտադրական կենսապարբերաշրջանով, արտադրության կազմակերպման և կառավարման մեթոդներով: Սկսվեց հյուրանոցային տնտեսության օբյեկտների, զվարճանքի տարբեր կենտրոնների զանգվածային շինարարությունը: Ընդլայնվեցին հյուրանոցային ցանցերը, ինտենսիվ կերպով աճեց արտագնա և ներգնա զբոսաշրջությունը: Տեղի ունեցան արմատական փոփոխություններ զբոսաշրջության առաջարկի և պահանջարկի շուկայում, որի արդյունքում զանգվածային կոնվեյերային զբոսաշրջությունը վերածվեց զանգվածային տարբերակված զբոսաշրջության: Կոնվեյերային զբոսաշրջությունը ենթադրում է զբոսաշրջիկների պահանջմունքների և մոտիվացիայի միատարրություն և պրիմիտիվիզմ: Իսկ տարբերակված զբոսաշրջությունը ենթադրում է զբոսաշրջիկների բազմաբնույթ պահանջմունքներ, զբոսաշրջային պահանջարկի մեջ նեղ մասնագիտացված հատվածների բազմաքանակություն, առաջարկվող ծառայությունների բազմազանություն և զբոսաշրջային արտադրանքի վառ արտահայտված մասնագիտացում: Կոնվեյերայինից անցումը տարբերակված զբոսաշրջության կատարվեց միաժամանակ արտադրողների շուկայից դեպի սպառողների շուկա անցմամբ: Առաջացան զբոսաշրջության նոր տեսակներ՝ պայմանավորված զբոսաշրջիկների անհատական, արտասովոր պահանջմունքներով[2]:

Զարգացման հին պատմություն ունի նաև հյուրանոցային արդյունաբերությունը: Առաջին հյուրանոցները՝ քարվանսարաները, առաջացել են մեր թվարկությունից 2000 տարի առաջ հինարևելյան քաղաքակրթությունում: Հին Հունաստանի և Հին Հռոմի ժամանակաշրջանում ծաղկում ապրեցին հյուրանոցների նախատիպ հանդիսացող իջևանատները, պանդոկները, փոսե-

[1] *Տե՛ս Гуляев В., Организация туристской деятельности, учебное пособие, Москва, 1996, с. 3.*

[2] *Տե՛ս Бабкин А., Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, 2008, с. 6, http://tourlib.net/books_tourism/babkin01.htm (մուտք՝ 01,03,2020).*

ը, փոստային կայանները՝ նախատեսված ճանապարհորդող առևտրականների, հոգևորականների և այլոց համար[1]:Առաջին գրավոր վկայությունը գալիս է Հին Հունաստանից և Հին Հռոմից: Դեռ Բաբելոնի թագավոր Համմուրաբիի օրենքներում ամրագրված էր պանդոկների գոյությունը: Ըստ օրենքի՝ պանդոկապանները պետք է վկայություն տային, եթե իրենց այցելուները պետական պաշտոնյայի դեմ պլանավորում էին հանցագործություն կատարել: Հին Հունաստանում ևս կային պանդոկներ, որոնք բնակչության սոցիալական և կրոնական կյանքում կարևոր դերակատարություն ունեին: Պանդոկներում չնայած գիշերելու տեղեր կային, սակայն դրանք նախատեսված էին հասարակական սննդի համար:

Առևտրի զարգացմամբ անհրաժեշտություն առաջավ առևտրականների համար գիշերակացի տեղեր ստեղծել, և արդյունքում առաջացան իջևանատները: Հռոմեացիների կողմից իջևանատների կառուցումը հյուրընկալության ոլորտի ձևավորման և զարգացման հիմքը դրեց: Հին Հռոմում իջևանատներ կառուցվում էին իրարից 25 մղոն հեռավորության վրա, որպեսզի ճանապարհորդները շատ չհոգնեին ճանապարհներին և կարողանային շուտ հանգստի տեղ գտնել: Սակայն դրանց ծառայություններից հնարավոր էր օգտվել հատուկ փաստաթղթի առկայության դեպքում, ինչը կվկայեր այցելուի կարգավիճակը[2]:

Միջին դարերում սովորական մարդկանց գիշերակացի ծառայություններ էին մատուցում կրոնական կառույցները: Ճանապարհորդությունները կատարում էին հիմնականում ուխտավորներն ու քահանաները: Անգլիայում իջևանատներ կառուցում էին արդեն ոչ թե ճամփորդների, այլ ալկոհոլ օգտագործած բնակչության համար: Չնայած իջևանատների թվաքանակի աճին, դրանց ծառայությունների մակարդակը շարունակում էր ցածր մնալ: Հանգստացողները քնում էին հատակին, սնունդը միատարր էր: Գյուղական վայրերում իջևանատներն այդքան տարածված չէին: Հաճախ գյուղերում կար մեկ իջևանատուն, որը սպասարկում էր բոլոր ժամանողներին: Բոլոր իջևանատներում կար դասակարգային տարբերակում: Հարուստ կենվորները ճաշում էին ճաշարանում կամ իրենց սենյակներում, իսկ աղքատները՝ սեփականատիրոջ և նրա ընտանիքի հետ: Նրանց մատուցում էին հասարակ սնունդ՝ նվազագույն գնով: Հարուստ հաճախորդներին հաճոյանալու համար իջևանատների սեփականատերը հաճախ նրանց առաջարկում էր հայտնի ճաշատեսակ: Հրաշալի խոհանոցի հիմնադիրները Եվրոպայում եղել են Իտալիայի բնակիչները: Այս երկրի բուրժուազիան, որը զբաղվում էր առևտրով և արհեստներով, նպաստեց խոհարարական արվեստի և հյուրընկալության արդյունաբերության զարգացմանը: XIV դ. երկրորդ կեսին խոհարարական և հյուրընկալության արդյունաբերության կենտրոնը Իտալիայից տեղափոխվեց Փարիզ: Սննդի արդյունաբերությունը Ֆրանսիայում մեծ պետական աջակցություն էր ստանում: Ֆրանսիայի թագավոր Կարլ V-ի անձնական խոհարար Գիյոմո Տիրելեն 1375 թ. գրեց առաջին խոհարարական գիրքը, որը բացահայտում էր խոհարարական արվեստի մի շարք գաղտնիքներ: Իսկ Իտալիայում նման գիրք հրատարակվեց միայն 1470 թ. անհայտ վանականների կողմից և կոչվեց՝ «Առաքինի հաճույքներ (Virtuous pleasures)»: 1571 թ. Ֆրանսիայում թագավոր Կարլ IX-ի համար մշակվեց առաջին մենյուն, որն էպիզոդիկ բնույթ էր կրում և թույլ էր տալիս արագ ընտրել ճաշատեսակն ու իմանալ, թե ինչից է այն պատրաստվում: Իսկական մենյուն հայտնվեց 100 տարի անց, XVII դ՝ Լյուդովիկոս XIV-ի ժամանակ[3]:

XII-XIII դդ. Ռուսաստանում առաջացան հյուրանոցների նախատիպերը՝ իջևանատները: Յուրաքանչյուր այցելու այնտեղ կարող էր գիշերակաց և սնունդ ստանալ, սակայն դրանք առանձնապես հարմարավետ չէին: Այստեղ նաև այցելուների ձիերը և տրանսպորտային միջոցներն էին տեղավորում: XV դ. իջևանատներ կառուցվում էին փոստային կայաններում: Իջևանատները գոյատևել են մինչև XIX դ. կեսերը: Երկաթուղային ճանապարհների կառուցումը կանգնեցրեց իջևանատների տարածումը, իսկ ավտոմեքենաների արդյունաբերության զարգացումը հանգեցրեց ճանապարհներին տեղակայված հյուրանոցների՝ մոթելների առաջացմանը:

---

[1] *Տե՛ս Зорин И., Каверина Т., Квартальнов В., Туризм как вид деятельности, учебник. М., 2005., с. 164.*

[2] *Տե՛ս Елканова Д., Осипов Д., Романов В., Сорокина Е., Основы индустрии гостеприимства, учебное пособие, М., 2010., с. 9.*

[3] *Տե՛ս Елканова Д., Осипов Д., Романов В., Сорокина Е., Основы индустрии гостеприимства, учебное пособие, М., 2010., с. 9.*

XVIII դ. հյուրընկալության ոլորտի կազմակերպությունները լայն տարածում ստացան ԱՄՆ-ում: 1607 թ. բացվեց առաջին իջևանատունը: 1634 թ. Բոստոնում բացվեց առաջին պանդոկներից մեկը: Պանդոկները դարձան հասարակական կյանքի կենտրոններ, զինվորների և ձեռնարկատերերի հանգստի վայր: Ամերիկյան պանդոկները կառուցվում էին եվրոպական ոճով:

Ժամանակակից ռեստորանի հիմնադիրը համարվում է ֆրանսիացի Մ. Բուլանժեն, որը Բաել փողոցում բացեց պանդոկ: Այստեղ մատուցվում էր ապուր, որն օրգանիզմն ամրապնդող և վերականգնող բուժիչ հատկություն ուներ: Ապուրը կոչվում էր «restorantes», ինչը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է ամրապնդում և վերականգնում: Չսահմանափակվելով միայն դրանով՝ Բուլանժեն 1767 թ. ստեղծեց իր հայտնի սուպը գառան մսով՝ սպիտակ գինու սոուսով: 1794 թ. Փարիզում արդեն շուրջ 500 ռեստորան կար[1]:

XIX դ. երկրորդ կեսին մենյու ասելով հասկանում էին տարբեր տեսակի ուտելիքների ամբողջություն, որը նախատեսված էր բնակչության բոլոր խմբերի համար: Այդպես առաջացավ Ա-լաքարտ (à la carte) մենյուն, երբ հաճախորդը կարող էր ընտրել մենյուից որևէ կերակրատեսակ:

Այսպիսով, ընդհանրական ձևով հյուրանոցային գործի առաջացման և զարգացման պատմությունը կարելի է բաժանել չորս հիմնական փուլի՝

1. մինչև XIX դ. սկիզբը, որը համարվում է հյուրանոցային գործի նախապատմություն, երբ մարդիկ տեղաշարժվում էին առևտրական, կրոնական, կրթական և այլ նպատակներով,
2. XIX դ. դ. սկզբից մինչև XX դ. սկիզբ, երբ առաջացան հյուրանոցային ծառայություններ մատուցող տարբեր տեսակի կազմակերպություններ,
3. XX դ. սկզբից մինչև XX դ. կեսեր, երբ ծառայությունների ոլորտի կազմակերպությունների թիվն աճեց, բարձրացավ մատուցվող ծառայությունների որակը, սակայն առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմները բացասական ազդեցություն ունեցան հյուրընկալության արդյունաբերության զարգացման վրա,
4. XX դ. կեսերից մինչև մեր օրեր, երբ ձևավորվեց հյուրընկալության արդյունաբերությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հյուրընկալության արդյունաբերությունը շատ վատ վիճակում էր, շենքերի մեծ մասը քանդված էին, չկային անհրաժեշտ ռեսուրսներ դրանց վերականգնման համար: Հյուրանոցային արդյունաբերության հետագա զարգացումը տեղի ունեցավ միայն հետպատերազմական տարիներին: 1950-1960 թթ. Արևմտյան Եվրոպայի երկրներում առաջացան առաջին ժամանցային և զվարճանքի համալիրները: Այսպիսով, հյուրընկալության ժամանակակից արդյունաբերությունը ներառում է հյուրանոցներ, ռեստորաններ, բարեր, կուրորտներ, խաղատներ, և այլն՝ ուղղված հյուրերի հանգստի և ժամանցի կազմակերպմանը[2]:

Նշենք, որ ներկայումս հյուրանոցային արդյունաբերությունն ունի զարգացման մեծ տեմպեր: Ինչպես փաստում է վիճակագրությունը՝ 2018 թ. հյուրանոցային արդյունաբերության համախառն եկամուտն աշխարհում կազմել է 600.49 մլրդ դոլար[3], ԱՄՆ-ում հյուրանոցների միջին օրական արժեքը 131.21 դոլար է, Եվրոպայի հյուրանոցների միջին օրական արժեքը՝ 129.70 դոլար[4]: 2019 թ. հունիսի դրությամբ աշխարհում ամենից շատ թվով հյուրանոցներ ունեցել է Wyndham hotel group-ը՝ 9157 հյուրանոց, այնուհետև Choice Hotels International-ը՝ 7045 հյուրանոց, Marriott International-ը՝ 7003 հյուրանոց, Hilton Worldwide-ը՝ 5872 հյուրանոց, InterContinental Hotels Group-ը՝ 5656 հյուրանոց, Best Western Hotels&Resorts-ը՝ 4008 հյուրանոց[5]:

Զբոսաշրջության և հյուրանոցային գործի զարգացմանը զուգընթաց զարգացավ նաև տրանսպորտը: Սկզբնական շրջանում մարդիկ ճամփորդում էին ոտքով, էշերով, ձիերով: Անիվի,

---

[1] Տե՛ս Елканова Д., Осипов Д., Романов В., Сорокина Е., Основы индустрии гостеприимства, учебное пособие, М., 2010., с. 9.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 9-14:

3 Տե՛ս Market size of the global hotel industry from 2014 to 2018 (in billion U.S. dollars), https://www.statista.com/statistics/247264/total-revenue-of-the-global-hotel-industry/.

4 Տե՛ս Hotel industry - Statistics & Facts, published by S. Lock, Jun 18, 2019, https://www.statista.com/topics/1102/hotels/.

5 Տե՛ս Leading hotel companies worldwide as of June 2019, by number of properties, https://www.statista.com/statistics/197869/us-hotel-companies-by-number-of-properties-worldwide/.

իսկ հետագայում շարժիչների բացահայտումը թույլ տվեց օգտագործել կառքեր, շոգենավեր, շոգեքարշեր, ինքնաթիռներ, և այլն, ինչ արդյունքում մարդիկ կարողացան ճամփորդել ավելի հեռու տարածաշրջաններ[1]:

1769 թ. ֆրանսիական բանակի գնդապետ Նիկոլա Ժոզեֆ Կունյոն ստեղծեց ինքնաշարժվող հարմարանք՝ հրետանային զենքի տեղափոխման համար: 1786 թ. Վիլիամ Մուրդոկը կառուցեց 3 անիվանի ֆուրգոն գոլորշիով՝ կրկնելով Կունյոյի մեխանիզմը: 1800 թ. ԱՄՆ-ում Ռիչարդ Տրեվիտիկը կառուցեց ռելսերի վրա ինքնագնաց վագոնների շարք՝ գոլորշու շարժիչով: 1803 թ. ԱՄՆ-ում Օլիվեր Էվանսը կառուցեց առաջին ճանապարհային վագոնը գոլորշու շարժիչով: 1860 թ. ֆրանսիացի Էտիեն Լենուարը ստեղծեց ներքին այրմամբ առաջին շարժիչը, իսկ 1862 թ. ստեղծեց առաջին տրանսպորտային միջոցը այդ շարժիչով: 1890-1900-ական թթ. շուրջ 100 ընկերություններ թողարկում էին գոլորշիով մեքենաներ: Այնուհետև սկսեցին օգտագործվել էլեկտրական շարժիչները և 1885-1915 թթ. թողարկվեց շուրջ 35000 էլեկտրական մեքենա[2]:

1814 թ. անգլիացի Ջորջ Ստեֆենսոնը ստեղծեց շոգեքարշ: Նա կառուցեց 3 լոկոմոտիվ՝ Բյուխերը՝ 1814 թ., Լոքոմոշնը՝ 1825 թ., Հրթիռը՝ 1829 թ. ինչպես նաև առաջին երկաթուղային ճանապարհները՝ Ստոկտոն-Դարլինգտոն, Մանչեստր-Լիվերպուլ: 1840 թ. Մեծ Բրիտանիայում արդեն կար երկաթուղային ճանապարհների ամբողջական շղթա, որոնք էլ հեղափոխություն արեցին զբոսաշրջության մեջ: Եթե 1740 թ. Լոնդոնից Էդինբուրգ հասնելու համար անհրաժեշտ էր 10 օր, ապա 1885 թ.՝ ընդամենը 14 ժամ[3]:

Համարվում է, որ առաջին ինքնաթիռը ստեղծել են եղբայրներ Ուիլբոր և Օրվիլ Ռայթերը և օդ է բարձրացել 1903 թ.: Ա. Մոժայսկին մշակեց թռչող ապարատի նախագիծ 1881 թ. և դրա համար ստացավ արտոնագիր: Դժվարությամբ գումար հավաքելով՝ նա պատրաստեց ինքնաթիռ երկու ոչ մեծ գոլորշու շարժիչներով: Առաջին փորձարկման ժամանակ ինքնաթիռը դուրս եկավ թռիչքուղուց և մի քանի մետր թռչելուց հետո պոչով հարվածեց գետնին: Ինքնաթիռի վերապատրաստման համար փող չհատկացրեցին: 10 տարի անց ավելի պարզ կոնստրուկցիայով ամերիկյան աէրոպլան օդ բարձրացավ և 37 մետր թռավ 12 վայրկյանում: Անցնելով զարգացման ավելի քան 100 տարվա պատմություն՝ ավիացիան դարձավ մեծ տարածությունների վրա մարդկանց և բեռների փոխադրման ամենաարդյունավետ միջոցը:

Առաջին շոգենավը ստեղծել է Ռոբերտ Ֆուլտոնը 1807 թ.՝ Կլերմոնտ նավը, որի արագությունը 9 կմ/ժ էր: Ներկայումս ջրային տրանսպորտն առավելապես օգտագործվում է զբոսաշրջային կրուիզների համար: Ծովային տուրիզմի հիմնական վայրերն են՝ Կարիբյան կղզիները, Միջերկրական ծովը, Եվրոպայի և Սկանդինավիայի շուրջ կրուիզները: Տարածված են գետերի վրա կրուիզները, որոնք սովորաբար 24 ժամը չեն գերազանցում և էքսկուրսիոն բնույթ ունեն, օրինակ Դանուբ, Սենա, Դուորո գետի վրա կրուիզները[4]:

Հյուրընկալության արդյունաբերության զարգացումը կապված է մի շարք ներքին և արտաքին գործոնների հետ: Արտաքին գործոնները որոշվում են շրջապատող իրականության տարրերի ազդեցությամբ, իսկ ներքին գործոնները անմիջականորեն կապված են հյուրընկալության արդյունաբերության կազմակերպությունների գործառնության առանձնահատկությունների հետ: Արտաքին գործոններից են՝ իրավական-քաղաքական, տնտեսական և ֆինանսական, մշակութային, ենթակառուցվածքային-տեղեկատվական, ժողովրդագրական գործոնները, ճանապարհորդությունների անվտանգությունը, առևտրի, նորագույն տեխնոլոգիաների զարգացումը: Ներքին գործոններից են՝ հյուրանոցային արտադրանքի կատարելագործումը, հյուրանոցային ծառայությունների ոլորտի զարգացումը, հյուրանոցային ցանցերի և ասոցիացիաների ստեղծումը, բաշխման համակարգերի զարգացումը, աշխատանքային ռեսուրսները, մարքեթինգային գործոնները[5]:

---

1 Տե՛ս Зорин И., Каверина Т., Квартальнов В., Туризм как вид деятельности, учебник, М., 2005., с. 216.

2 Տե՛ս Биржаков М., Никифоров В., Индустрия туризма: перевозки, СПб., 2007, с. 116-118.

3 Տե՛ս նույն տեղում, էջ 239-240:

4 Տե՛ս Елканова Д., Осипов Д., Романов В., Сорокина Е., նշվ. աշխ., էջ 111-113:

5 Տե՛ս Кусков А., Гостиничное дело, учебное пособие, М., 2009, с. 9-12.

Այսպիսով, համաշխարհային զբոսաշրջության և հյուրընկալության արդյունաբերությունն ունեցել է զարգացման հին ու հարուստ պատմություն:

Հայաստանում դեռևս հին ժամանակներից սկսել են զարգանալ ճանապարհորդությունները: Հայկական բնաշխարհին ու նրա պատմությանը ծանոթանալու նպատակով Հին Հայաստանում ճանապարհորդել են հույն և հռոմեացի պատմիչներ: Միջնադարում Հայաստան են այցելել եվրոպացի ճանապարհորդներ: Մարկո Պոլոն առաջինն է նկարագրել Արարատի գեղեցկությունը: Ավելի ուշ, Հայաստանում շրջագայել են Ժան Շարդենը (1671 թ.), Ֆրիդրիխ Պարրոտը (1829 թ.), գերմանացի Հերման Աբիխը (1844 և 1845 թթ.), անգլիացիներ Ջեյմս Բրայսը (1876 թ.), Հենրի Լինչը (1893-94 թթ. և 1898 թ.) և ուրիշներ: XIX դ. վերջին Թիֆլիսի Ներսիսյան, Գայանյան և Հովնանյան դպրոցներն արշավներ են կազմակերպել Գոշավանք, Հաղարծին, Սանահին, Լոռու բերդ, Հաղպատ և այլուր:

Հայաստանում զբոսաշրջությունը սկսել է զարգանալ 1930-ական թվականներից: 1932 թ. ՀԽՍՀ-ում հիմնվել է «Ինտուրիստ» համամիութենական բաժնետիրական ընկերության Երևանի գործակալությունը: 1936 թվականից զբոսաշրջությունը ղեկավարել է Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդը: 1952 թ. կազմակերպվել են Երևանի տուրիստական էքսկուրսիոն և Թումանյան ավանի տուրիստական բազաները, ստեղծվել «Երևան» (1952 թ.) և «Հայաստան» (1953 թ.) տուրիստական երթուղիները:

1954 թ. Հայաստանն ընդգրկվել է համամիութենական տուրիստական երթուղիներում, ճանապարհորդությունների և էքսկուրսիաների բյուրոներ են բացվել Երևանում (1962 թ.), Լենինականում (1964 թ.), Կիրովականում (1966 թ.):

1959 թ. ստեղծվել է Պատանի տուրիստների հանրապետական կայանը, 1962 թ.՝ Տուրիզմի և էքսկուրսիաների հանրապետական խորհուրդը: 1957 թ. հայ զբոսաշրջիկներն արշավ են կազմակերպել Կոլա թերակղզի, 1960 թ.՝ Արխանգելսկ, 1965 թ.՝ Հյուսիսային Ուրալ, մոտարշավ՝ ԽՍՀՄ մայրաքաղաքներով:

1963 թ. կազմակերպվել են «Արմենիա» տուրիստական առաջին գնացքը և նավով ուղևորություններ Վոլգա գետով, 1968 թ.՝ առաջին անգամ Սև ծովով: 1970 թվականից ինքնաթիռով տուրիստական ուղևորություններ են կազմակերպվել Մոսկվա, Լենինգրադ, Ռիգա և այլ քաղաքներ:

1970-1980-ական թթ. զբոսաշրջիկների համար շահագործման են հանձնվել մի շարք հյուրանոցներ, ստեղծվել են ճանապարհորդությունների և էքսկուրսիաների բյուրոներ, 1972 թ.՝ «Սպուտնիկ» միջազգային երիտասարդական տուրիստական կազմակերպությունը[1]:

Զբոսաշրջությունը ներկայումս համաշխարհային տնտեսության արագ զարգացող ոլորտներից է: Ինչպես փաստում է վիճակագրությունը՝ 1950 թ. միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն աշխարհում կազմել է 25 մլն մարդ, 1960 թ.՝ 69.4 մլն, 1970 թ.՝ 165.8 մլն, 1980 թ.՝ 278.1 մլն, 1990 թ.՝ 439.4 մլն, 2000 թ.՝ 680 մլն մարդ[2], 2019 թ.՝ 1.5 մլրդ մարդ[3], ինչն ըստ կանխատեսումների՝ 2030 թ. կհասնի 1,8 միլիարդի[4]:

Աղյուսակ 1. Միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն աշխարհում, 1995-2018 թթ. (մլն մարդ)[5]

Տարածաշրջան/ տարիներ	1995	2000	2005	2010	2015	2017	2018	Մասնաբաժինը, %, 2018	փոփոխությունը %-ով՝

[1] *Տե՛ս «Դպրոցական մեծ հանրագիտարան», Հ.Մ. Այվազյանի խմբագրությամբ, Ե., 2010թ., գիրք 2, հատոր 2, էջ 40, 510:*

[2] *Տե՛ս International Tourist Arrivals by World Region, https://ourworldindata.org/tourism (մուտք՝ 01.12.2019):*

[3] *Տե՛ս UNWTO World Tourism Barometer, January 2020, 18(1), p. 1, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.1 (մուտք՝ 01.12.2019):*

[4] *Տե՛ս Tourism Towards 2030, Global Overview, Advance edition presented at UNWTO 19th General Assembly, 10 October 2011, p. 15, https://www.globalwellnesssummit.com/wp-content/uploads/Industry-Research/Global/2011_UNWTO_Tourism_Towards_2030.pdf (մուտք՝ 01.12.2019):*

[5] *Տե՛ս International Tourism Highlights 2019 Edition, UNWTO, p. 16, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284421152 (մուտք՝ 01.12.2019):*

									2018/2017
Աշխարհ, ո-րից՝	531	680	809	952	1196	1329	1401	100	5.4
Եվրոպա	308,1	396,4	450,7	490.8	581.8	636.6	672.3	48.0	5.6
Ասիա և Խաղաղ օվ-կիանոսյան տարա-ծաշրջան	86.2	113.8	152.9	205.3	293.6	337.6	358.7	25.6	6.2
Ամերիկա	108,2	130.6	136.5	155.4	200.2	227.3	235.0	16.8	3.4
Աֆրիկա	11.5	14.9	19.4	28.3	36.0	42.5	45.5	3.2	7.1
Մերձավոր Արևելք	8.5	12.8	21.5	33.5	39.7	36.8	40.6	2.9	10.2
Աշխարհի այլ երկրներ	8.7	12.0	28.4	38.3	41.3	47.9	49.0	3.5	2.2

2018 թ. զբոսաշրջային ճանապարհորդությունների 58%-ը եղել է օդային հաղորդակցմամբ, 37%-ը՝ ավտոճանապարհային, 4%-ը՝ ջրային, 2%-ը՝ երկաթուղային:

2018 թ. միջազգային զբոսաշրջիկների 56%-ի ճանապարհորդության նպատակը եղել է հանգիստը, ժամանցը և ռեկրեացիան, 27%-ը ճամփորդել է հարազատներին այցելության, առողջական, կրոնական նպատակներով, 13%-ը՝ գործնական և 4%-ը՝ այլ նպատակներով[1]:

2018 թ. առավել շատ զբոսաշրջիկներ ընդունել են Ֆրանսիան (89 մլն), Իսպանիան (83 մլն) և ԱՄՆ-ն (80 մլն), իսկ զբոսաշրջությունից ստացած ֆինանսական մուտքերով առաջատար է եղել ԱՄՆ-ն (214 մլրդ), այնուհետև Իսպանիան և Ֆրանսիան (74 և 67 մլրդ դոլար)[2]:

2019 թ. զբոսաշրջության համախառն ներդրումը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 8.9 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 10.3%-ը, ապահովել է 330 միլիոն աշխատատեղ (յուրաքանչյուր 10 աշխատատեղից 1-ը), այցելուների ծախսերը կազմել են 1.7 տրիլիոն դոլար (ընդհանուր արտահանման 6.8%-ը, ծառայությունների արտահանման 28.3%-ը): 2019 թ. զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում առավելագույնն է եղել հետևյալ երկրներում՝ ԱՄՆ՝ 1839 մլրդ դոլար, Չինաստան՝ 1585 մլրդ դոլար, Ճապոնիա՝ 359 մլրդ դոլար, Գերմանիա՝ 347 մլրդ դոլար, Իտալիա՝ 260 մլրդ դոլար, Միացյալ Թագավորություն՝ 254 մլրդ դոլար, Ֆրանսիա՝ 229 մլրդ դոլար, Իսպանիա՝ 198 մլրդ դոլար, Մեքսիկա՝ 196 մլրդ դոլար, Հնդկաստան՝ 194 մլրդ դոլար[3]:

Վերջին տարիներին զբոսաշրջային ճանապարհորդությունների միտումներն աշխարհում հետևյալն են.

- աճող չինական շուկա,
- թվային տեխնոլոգիաների օգտագործում ամրագրումների, տեղեկատվության որոնման և այլ նպատակներով,
- շոփինգ զբոսաշրջություն,
- միլիոնավոր միլենիալներ (1981 թվականից հետո ծնվածներ կամ Y սերունդ, որոնց թիվը գերազանցում է 70 միլիոնը), որոնք հաջորդ տարիներին ևս կկազմեն ճանապարհորդների ամենամեծ շուկան,
- գործնական և ժամանցի այցեր (Bleisure Boom),
- արկածային զբոսաշրջություն (սաֆարիներ, արշավներ, հեծանվավազք),
- բժշկական զբոսաշրջություն,

[1] *Տե՛ս նույն տեղում:*
[2] *Տե՛ս International Tourism Highlights 2019 Edition, UNWTO, p. 9, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284421152 (մուտք՝ 01.12.2019):*
[3] *Տե՛ս Country Analysis, https://www.wttc.org/economic-impact/country-analysis/ (մուտք՝ 01.12.2019)*

- էկոզբոսաշրջություն,
- գաստրոնոմիական զբոսաշրջություն,
- միայնակ ճանապարհորդություններ, հատկապես կանանց կողմից կատարվող,
- պատասխանատու և կայուն զբոսաշրջություն,
- զանգվածային զբոսաշրջությունից խուսափելու նպատակով այցեր ավելի փոքր, քիչ այցելու ունեցող քաղաքներ,
- այցելություն ձմեռային կուրորտներ,
- առողջարանային զբոսաշրջություն հանքային ջրերով հարուստ կուրորտներ,
- հետաքրքրության մեծացում սառցե, ստորջրյա, ծառերի վրա, քարանձավների մեջ, բնության գրկում գտնվող հյուրանոցների նկատմամբ,
- Մետաքսի ճանապարհի երկրներում զբոսաշրջության ակտիվացում:

Վերջին տարիներին Հայաստանում զբոսաշրջությունն աճի միտումներ է դրսևորում: Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ 2019 թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888 զբոսաշրջիկ: Նախորդ տարվա համեմատ ժամանողների թվաքանակն աճել է 14.7%-ով[1]:

Գծապատկեր 1. ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը (2009-2019 թթ.)[2]



	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Ժամանողներ	575281	683979	757935	843330	1E+06	1E+06	1E+06	1E+06	1E+06	2E+06	2E+06
Մեկնողներ	526193	640032	714953	806555	1E+06	1E+06	1E+06	1E+06	1E+06	2E+06	2E+06

2019 թ. ժամանողների 22.7%-ը եղել են ՌԴ-ից, 6.1%-ը՝ ԱՄՆ-ից, 5.0%-ը՝ ԻԻՀ-ից, 8.3%-ը՝ Գերմանիայից, 6.6%-ը՝ Ֆրանսիայից, 1.5%-ը՝ Վրաստանից և այլն:

2019 թ. Հայաստան ժամանող զբոսաշրջիկների 29%-ը հանգրվանել են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (550289 զբոսաշրջիկ), իսկ մնացած 1344088-ը՝ բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն: Հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկների 55.4%-ն այցելել են հանգստի և ժամանցի, 15.9%-ը՝ գործնական, 0.5%-ը՝ բուժման, 28.2%-ը՝ այլ նպատակներով[3]: 2019 թ. ՀՀ-ում եղել է 702 հյուրանոցային տնտեսության օբյեկտ, որից 413-ը՝ Երևանում[4]:

ՀՀ-ում, հաշվի առնելով առկա զբոսաշրջային ռեսուրսները, զարգացման հեռանկարներ ունեն զբոսաշրջության հետևյալ տեսակները՝ կրոնական, պատմամշակութային, առողջարանային, գաստրոնոմիական, գյուղական, քաղաքային, բուժական, սպորտային, արկածային, կրթական, գիտական և էկոզբոսաշրջությունը: Հետևողական և համալիր աշխատանքներ են պետք մարքեթինգային գործունեության բարելավման, ենթակառուցվածքների զարգացման, ներդրումների ներգրավման և այլ ուղղություններով՝ զբոսաշրջությունը ՀՀ-ում զարգացնելու համար:

Հաշվի առնելով համաշխարհային միտումները և Հայաստանի նկատմամբ հետաքրքրության մեծացումը՝ կարող ենք ասել, որ ապագա տարիներին Հայաստանի զբոսաշրջության զարգացման միտումներ կլինեն՝ էկոզբոսաշրջությունը, պատմամշակութային և կրոնական, արկածային զբոսաշրջությունը, գաստրո և գինու տուրերը: Զարգացման մեծ հեռանկարներ ունեն

---

[1] *Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 139, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf (մուտք՝ 01.12.2019)*

[2] *Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, https://www.armstat.am/am/?nid=14*

[3] *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջ 105, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf (01.012.2019)*

[4] *Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն:*

նաև բժշկական և գործարար զբոսաշրջությունը: Զբոսաշրջիկներն առավել սիրում են հայկական հյուրընկալությունը, հայկական խոհանոցը, համեմատաբար մատչելի գները, հրաշալի բնությունը: Նրանց Հայաստանը գրավում է որպես ոչ զանգվածային զբոսաշրջային ուղղություն: Մեծահասակ զբոսաշրջիկներն առավելապես հետաքրքվում են պատմամշակութային և կրոնական տուրերով, իսկ երիտասարդները՝ արկածային: Ուստի ենթակառուցվածքների, ծառայությունների որակի բարելավման, օդային հաղորդակցության դյուրինացման և մատչելիության ապահովման, ակտիվ և շարունակական նպատակային մարքեթինգային միջոցառումների իրականացման պարագայում Հայաստանը առաջիկա տարիներին պահանջված զբոսաշրջային ուղղություններից մեկը կլինի աշխարհում:

Гаяне Товмасян, Рубик Товмасян, БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ. В статье представлены основные этапы исторического развития туризма, индустрии гостеприимства, происхождение отелей, ресторанов и транспорта. Обсуждаются текущие и будущие туристические тенденции в мире. Представлена основная статистика туризма в Армении. Также предложены основные тенденции дальнейшего развития туризма в Армении. В ближайшие годы в Армении будут востребованы следующие виды туризма: эко-туризм, историко-культурно-религиозный, приключенческий туризм, гастрономические туры. Медицинский и деловой туризм также имеют большие перспективы развития. Туристы любят армянское гостеприимство, армянскую кухню, относительно доступные цены, прекрасную природу. Армения привлекает их как немассовое туристическое направление. Взрослых туристов больше всего интересуют исторические, культурные и религиозные туры, а молодежь больше интересуется приключенческими турами. Таким образом, в случае улучшения качества инфраструктуры, услуг, облегчения доступа к воздушному транспорту, активных и постоянных целевых маркетинговых мероприятий Армения станет одним из самых популярных туристических направлений в мире в ближайшие годы.

Ключевые слов: *туризм, турист, гостеприимство, транспорт, гостиница, таверна, ресторан, маркетинг, дестинация.*

Gayane Tovmasyan, Rubik Tovmasyan, FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA. The article presents the main stages of historical development of tourism, hospitality industry, the origins of hotels, restaurants and transport. It discusses the current and future tourism trends in the world. The main statistics of tourism in Armenia are discussed. Also the main trends of future development of tourism in Armenia are suggested. In coming years, the following types of tourism will be more demanded in Armenia: eco-tourism, historical-cultural, religious, adventure tourism, gastronomy and wine tours. Medical and business tourism also have great prospects for development. Tourists love the Armenian hospitality, Armenian cuisine, the relatively affordable prices, wonderful nature. Armenia attracts them as a non-mass tourist destination. Adult tourists are mostly interested in historical, cultural and religious tours, and young people are more interested in adventure tours. Therefore, in case of improving the quality of infrastructure, services, facilitating air access, and implementing active and continuous targeted marketing activities, Armenia will be one of the most popular tourist destinations in the world in the coming years.

Key words: *tourism, tourist, hospitality, transport, hotel, tavern, restaurant, marketing, destination.*